ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2014թ. փետրվարի 11 — թիվ 14 - Ա

# ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2014 թվականի հունվարի 30-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ա. Ստեփանյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

2014 թվականի փետրվարի 11-ից Ալբերտ Վահրամի Ստեփանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2013 թվականի դեկտեմբերի 18-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ